

Դուրս գալիս լրագրաց ճանրու
նախըր արագորութեան գրաց,
լրագրաց վերաբերեալ, նախի
կամ որ եւ ինչ գործի իւն յարգիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո.
Լիս, Ղինիլի խան, Մախիլ գրասենե
կակը:
Ճամբու ծախքը չվճարուած եւ.
Ժակ չընդունուիր:

Պ. Ֆրանսիօրթ յունվ. 12 թուս.
Եօղղասէն հեռագիր զարկած է թի-
շարունակ ձևն անղաղուն և սաստիկ
ցուրտ տիբերուն պատճառաւ աղ-
բատ ժողովրդաց տառապանք բազ-
մապատկեր է:

Այս հեռագրին վրայ օգնութեան մասնագործը 700 օգնական լիւր զրկեց Գ. Յարմարի, որպէս շուտով Եօզրատու գաւառին սովատանջ թշուառներուն օգնութեան համար:

Վեհ. Ստեփանը Ոսմանիէի մեծ պատուանշանը տուաւ Սպարապետութեան տեղակալ Վահմ. Ալի Սայիպ վաչային:

Բարձր. Խորիլին սեփական ֆա-յում՝ շոգենաւ որ Եգիպտոս երթա-լու կը պատրաստուէր, Վահմ. Աբրա-համ վաչային տրամադրութեան ներքին ազատելու հրաման ստացաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԵՐ ՈՒՄԸՆԴՈՒՄ	
14 յունի. երեքշաբթի իրիկուն	43 29
15 » չորեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	43 35
կէս օր	—
Կ. Պօլիս 14 յունի.	
Սօսիէի լէնէրայի բաժինը Անգլ. լիւր	7 44
« ֆոխանակութեան »	5 46
Կ. Պօլսոյ Պանքային »	6 42
Քրէտի լէնէրայի »	41 5
Քրէտի Ոսթրո-Սերբ	
Երկրորդ զինացի հին	3ր. 122 3/4
Փոխ. 1863	» 330
» 1865	» 333
» 1869	» 288 3/4
» 1872	» 79
» 1873	» 263
Թրամուէյ	Օսմ. լիւր 3 85

ԸՆԹԱՅՔ ԴԻԱՄՈՑ	
44 ՅՈՒՆԻԱՐ	
Անգլ. լիւր	409.28
Նարոյէնի ոսկի »	87 25
Իմրէսի ոսկի »	89
Գրքերի »	51. 10
Հին ֆրանք »	—
Հին ցուց »	104 35
Պղինձ »	129 30

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՀՐԱՄԱՐ ԱՌ. ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒԱՆՍ

Աղբային ժողովը նիստ ունի յա-ռաջիկայ ուրբաթ յունի. 17 'ի Գա-լաթիս:

Ատեանը պիտի բացուի ժամ 8 իշ-6 ին և գոցուի 10 ին:

Հրաւիրեալ են Երեսիոյն Եփէն-տիններն իրենց ազգասիրական պար-տականութիւնը կատարելու փու-թալ:

11 Յունի. 1875

'ի Պատրիարքարանս Հայոց

Կ. Պօլիս

ՊԱՏՐԻԱՐԺ Կ. ՊՈԼԻՍ

ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՍ

ՕՐԱԿԱՐԳ.

1. Ընթերցումն Կայսերական Պէ-րաթին Պատրիարքական հաս-տատութեան.
2. Ընթերցումն Գննիչ Մասնաժո-ղովոյ Աղբային նախընթաց անցից.
3. Փոփոխելի արամադրութիւնը Աղբ. Սահմանադրութեան.

Ատեանագլխի

Ս. Պ. Պ. Փափուգեան

Անցեալ երկուշաբթի առաւ Լա թիւրքի լրագիրը՝ Խորիլաքի Եփէն-տինի իւր ազգին քանի մ'ուսումնաս-իրական հաստատութեանց շնորհած գործակալն նպատակներն յիշելու առ-թիւ՝ մեր ազգին նկատմամբ ծանր անխնայութիւն մ'ըրած է, զոր չենք կրնար անտես ընելով անցիկը:

Ահաւասիկ յիշեալ անխնայութիւ-նը:

«Կրտսն թէ.— Բայց՝ ստուգութիւ-նը չենք երաշխաւորեր— Կ. Պօլսոյ Հայ հասարակութիւնը մտադիր է Հայ քաղաքացւոյ պատուանշան ըն-ծայել Խորիլաքի Եփէնտինին, որպէս զի Հայոց կրթական և մարդասիրա-կան հաստատութիւններն ալ անոր նուէրներէն օգուտ քաղեն:

«Կրտսն թէ.— Հայերն ուրիշ բա-նով պարգած են»:

Այս տողերուն անտեղութիւնն այնչափ շոյափնիլ է որ նկատողու-թեան իսկ առնուլ չէր արժեր եթէ միանգամայն անարգական չըլլային, մանաւանդ վերջին պարբերութիւնը:

Հայերն երբեք մտքերնուն չեն անցունել Խորիլաքի Եփէնտինի կամ այլ որ և է օտարազգիի մ'առաջա-ձեռնութեան օգուտ քաղել, որպէս զի Հայ քաղաքացւոյ պատուանշան տալ ուզեն անոր:

Հայերը Խորիլաքի Եփէնտինն շատ աւելի առատաձեռն բարերար-ներ ունին իրենց մէջ, որք մինչև այսօր Աղբին կրթական և բարեպա-տական հաստատութեանց մեծամեծ նպատակներ ըրած են և կ'ընեն, ինչ-պէս որ դեռ մօտ օրերս իսկ պայմա-ն փորձերը տեսնուեցան:

Հայերն իրենց Պատրիարքարանի սնտուկին 40000 լիւրայի մօտ պարտ-քն իրենք վճարեցին, մէկ մասը մայ-րաքաղաքիս ազգայնոց կամուրջը-ւէրներովը, մէկ մասն ալ՝ այն է 3000 լիւրայի դուժար մը՝ երկու վեհանձն բարերարաց առատաձեռնութեան շը-նորհիւ. մինչդեռ Յունաց պատրի-արքարանի սնտուկն՝ իր ֆարաւոց վճարման համար կայսերական կա-ռավարութեան դիմած և 20000 լի-ւրա խնդրած է, անշուշտ իր Խորի-լաքի Եփէնտիններէն յոյսը կտրե-լով:

Ասկէց յայտնի կը տեսնուի որ եթէ ուրիշ բանի զբաղողներ կան, ուրիշ տեղ պէտք է փնտռել և ոչ Հայոց մէջ, որք ոչ միայն իրենց առ ազգն ունեցած պարտականութիւն-նին քիչ շատ կը ճանչեն ու կը հա-տուցանեն, այլ և ժամանակ ժա-մանակ օտար ազգաց ալ չեն խնայեր իրենց լուծայն՝ առանց որ և է խը-րութեան. և ասոր փորձն ամենէն աւելի յոյնք տեսած են և միշտ կը տեսնեն:

Դեռ ասկէց քանի մ'ամիս առաջ Մաքրի գեղի մէջ ի նպատակ յունաց գաղութներէն երկայնացում մը տրուելով, հոն գտնուող ձեռնհաս Հայոց գրե-թէ ամենն ալ իրենց զրկուած տոմ-սակներն ընդունեցին և առատապէս մասնակցեցան նպատակին. մինչդեռ քանի մը շաբաթ ետքը ի նպատակ Հայոց գաղութներէն երկայնացում տըր-ուած տոնն, Յունաց զրկուած տոմ-սակներէն հազիւ քերք հաս ընդուն-ուեցան:

Լսածնուս նայելով, Լա թիւրքի այս անարգական առողերուն շարժա-ռիթը՝ Խորիլաքի Եփէնտինի մօտե-րս ի նպատակ յունաց բարեգործա-կան ընկերութեան առած պարա-հանդէսին առթիւ քանի մը նշանա-ւոր Հայոց զրկած տոմսակներուն մեծ մասին ետ զրկուիլն է եղեր:

Եթէ ասանկ բանի մը կարեւորու-թիւն տալ պէտք է, Լա թիւրքի լրագիրն ինչո՞ւ մի և նոյն անխնայու-թիւնն ընելու չհամարձակիր տէրու-թեան բարձրատնային պաշտօնէից նկատմամբ, որք նոյնպէս զրկուած տոմսակներուն մեծ մասն ետ դար-ձուցած էին:

Աւելորդ է ըսել թէ այսպի-սի անարգական անխնայութիւն մը, զոր չենք երբեք յուսար Լա թիւրքի պէս լուրջ թերթի մը խըմ-

բազրութենէն, ինչ ներշնչութեամբ ալ գրուած ըլլայ, երկու հայրենա-կից ազգաց մէջ պողոթնիւն ձգելէ զատ ուրիշ արդիւնք չկրնար ունե-նալ, և տարակոյս չունինք որ նոյն իսկ յունաց լուսամիտ մասին վրայ ալ անհաճոյ տպաւորութիւն մը կ'ընէ:

Ս. Երուսաղէմայ միաբան Գեր-Մէլքիսեդեկ վարդապետ Մու-րատեանց՝ Կուտինայի վիճակէն ա-ռաջնորդ ընտրուած ըլլալով, հրա-ժարակամը զրկած է Ամեն. Ս. Պատ-րիարքին:

... Խմբագիր.

Կը խնդրեմք որ հետեւեալը Ձեր ազգօգուտ լրագրոյն մէջ հրատարա-կել բարեհաճիք:

Քանի մ'ամիս 'ի վեր Սիվրիհիսա-րի խնդիր մը ծագած է:

Այս խնդիրն իր ծագմանը մէջ շատ պարզ էր և հեշտ 'ի լուծումն, եթէ հոս ազգեցութեանց չպատա-հէր, ազգեցութեանց կրեմ, որ ըզ խնդիրն կ'ընտրուէր, արժարձելէ և պարարեցնելէ զատ ուրիշ բանի չեն ծառայեր բնաւ:

Այս դառն ճշմարտութիւնը հը-րապարակ չպիտի հանէինք, եթէ քը-մահաճ հրատարակութիւնը զմեզ չը հարկադրէին.

Ինչ է այս խնդիրը.— Երեք տա-րի առաջ Սիվրիհիսարի մէջ առաջին անգամ Սահմանադրութեան թաղա-կան խորհուրդը մը կը կազմուի այն-պիսի անձերէ, որ 7—8 տարիէ 'ի վեր մեծամեծ և նշանուոր ծառայու-թեամբ և զոհողութեամբը հասա-րակաց սէրն ու համակրութիւնը գը-րուած էին իրաւամբ:

Այս թաղ. խորհուրդը Մալաթի-այի Տ. Պօղոս քահանայն Գաղատիա-յէն 'ի Սիվրիհիսար կը հրաւիրէ 300 զրչ ամառականաւ 'ի պաշտօն ազկանց վարժարանի դաստիարակութեան:

Յիշեալ քահանայն քանի մ'ամիս լուսութիւն պահելէ ետք յանկարծ կերթայ 'ի Սիվրիհիսար, ուր առանց վարձու տուն մ'ալ կը յատկացնէ թաղ. խորհուրդը:

Երկու քահանայից վախճանը վը-րայ հասնելով, քահանայք և թաղ. խորհուրդը կառավարիկն Տ. Պօղոսին որ առժամանակեայ կերպով քահա-նայագործութիւն ալ ընէ մինչև 'ի նոր կարգադրութիւն, և առ այս ըս-տորադրութիւն կ'առնուն:

Տեղւոյն Խառն ժողովն՝ ընծա-յացուաց վրայ ձեռնադրութիւն կա-տարուելու ատեն Տ. Պօղոսին առա-ջադրութիւն կ'ընէ թէ՛ «քահանայից թիւը լրացնելու համար 3ի վրայ ձեռ-նադրութիւն պիտի ըլլայ, բայց եթէ դու ալ բնիկ քահանայ ըլլալ յանձն կ'առնուս, Խառնակ 3ի՛ 2ի վրայ կ'ա-տարել տանք ձեռնադրութիւնը»:

Առ այս կը պատասխանէ Տ. Պօղոս թէ՛ «ես հոս միայն վարժապետու-թեան համար եկած եմ և ուրիշ պաշտօն յանձն չեմ առնուր»:

Յատենի խառն ժողովոյ կարճա-նադրութիւն այս, բայց 3ի վրայ ձեռ-նադրութիւնը կատարուելէ ետք՝ յիշեալ Տ. Պօղոսը կրկին անդադար խնդիր յարուցանել, և իբրեւ բնիկ՝ քահանայագործութեան պահանջու-մն ընել:

Թաղ. խորհուրդը շատ կը ջանայ խնդիրը քաղցրութեամբ վերջացնել և մինչև իսկ իւր ամառական 3 ոսկիի հանել կուզէ. բայց ինչ որ ալ կ'ընէ չյաջողիր:

Հուսկ ապա՝ խնդիրը Գեր. Ա-ռաջնորդ Սրբազանին կը հաղորդեն. Ս. Առաջնորդը կը գրէ թէ՛ Տ. Պօ-

ղոսը միայն վարժապետութեան պաշ-տօնով եկած ըլլալով չկրնար ուրիշ պաշտօն վարել. և եթէ չհաճիր, Սիվրիհիսարէն հեռանալը հարկ կըլ-լայ:

Խնդիրն առով ալ չվերջանար. Պօլիս կը գրուի, Կրօնական ժողովը կորոշէ որ Տ. Պօղոս իւր հայրենիքը դառնայ և հոն իր պսակեալ եկե-ղեցւոյն մատուցանէ իւր ծառայու-թիւնը, եթէ կուզէ ազգին ծա-ռայել:

Ամեն. Ս. Պատրիարքն հայրա-բար կը խրատէ զՏ. Պօղոս և քա-նիցս կը գրէ որ բացի վարժապե-տութենէ ուրիշ բանի չմիջամտէ. բայց ամեն յորդոր և հաշտարար միջոց անօգուտ կ'ըլլան:

Վերջապէս Ս. Պատրիարքը կը հար-կադրի գրելուր ելլէ Պօլիս դայ, չգար-կը կրկնէ և կերեք ինչէ, դարձեալ չը գար, քննիչ կըղրկէ և անոր միջոցաւ կը հրաւիրէ ի Պօլիս ի դատաւարան առաջի կրօնական ժողովոյ, և դարձ-եալ չգար: Այս խնդիրն այժմ ազ-գային պատուոյ կերպարան մ'առած է շնորհիւ այն ազգեցութեանց՝ որ այս աստիճանը հասուցին այսչափ պարզ և փոքր խնդիր մը և Սիվրի-հիսարի բազմադարեան խաղաղու-թիւնը խռովեցին:

Սահմանադրութեան կազմեալ թաղ. խորհուրդը մ'յերեսաց անպատուու-թեան հրաժարեցաւ, քահանայք և վարդապետք դանակածեցան, անիշ-խանութիւնը տիրեց, դպրոցք և ե-կեղեցի գոցուեցան շնորհիւ մէկ քանի անձանց՝ որք տեղւոյս ազգե-ցութեանց շնորհիւ քաջալերեալ և յիշեալ խաղաղութեան պաշտօնեա-յէն թեղաբերալ՝ գործեցին այս ա-մենը և դեռ պիտի գործեն եթէ...:

Տ. Պօղոսի բարեկամ պաշտպան-ներն այսպէս անխնայութիւնը քա-ջալերելով՝ քաջալերեցին նաև ըմ-բոստութիւնը և զբաղեցուցին թէ՛ զՍիվրիհիսար և թէ՛ զՎարչութիւնը, որոյ համար կրտսն թէ՛ իւր իշխա-նութիւնը տկարացած է նոյն իսկ քահանայի մը վրայ, որ յոյժ ցա-ւալի է:

Ինչ հարկ կար այսչափ յուզմանց-եթէ արդար և անմեղ էր Տ. Պօղոս, թո՛ղ դար հոս և զինքն արդարա-ցնելով փառօք վերադառնար. բայց յիշեալին պաշտպաններուն բանին չեկաւ այս:

* * *

Այս նամակին վրայ չենք կրնար լուսութեամբ անցնիլ և՛ ցաւ չյայտնել նկատելով որ Սիվրիհիսարի նման խա-ղաղ քաղաք մը խաղաղութեան պաշ-տօնէի մ'երեսէն այսպէս կը խռովի և միանգամայն ազգային վարչու-թեան պատիւը կանարգուի:

Վարչութեան պարտքն է այդ քա-հանան անյայտը հեռացնել այն տե-ղէն, ուր իր ներկայութիւնը թերեւս աւելի մեծ չարեաց պատճառ պիտի ըլլայ: Արդէն թաղ. խորհուրդոյն հրա-ժարման պատճառ եղած է. այն թաղ. խորհուրդոյն, որոյ Ատենապետ Ջերջ-եան Մեծ. Ստեփան աղան անցեալ-ներն Անգլիական մասնաժողովէն 500 ոսկի ձեռք բերած էր 'ի նպատակ Սիվրիհիսարի սովատանջ ազգայնոց, ինչպէս որ հրատարարած ենք յրադ-րոյս մէջ:

... Տէր

Ներփակեալ յօդուածն Օրագրոյ զրկած էի ի հրատարակութիւն, բայց նա թերթին անձկութիւնն և յօդուածին երկար լինելը պատճա-ռելով չուզեց հրատարակել. ուստի զայն կուղարկեմ Ձեր գ. մեծապատ-ւութեան խնդրելով որ պատուական

Թերթերնուդ. մէջ ընդունիլ բարե-
հաճիք :
11/23 Յունիս 1875 Ձերդ անձնուէր
Կ. Պոլիս Թ. Մ. Նշեալ

ՍՈՒ ԿՈՐԵՆՅԻՍ

Սիրելի Հայրենակիցք
Կոր տարին ինձ առիթ կը ներկայա-
նայ մի քանի խօսք ուղղել Ձեր բնական-
գիտնի արտաբերէն. ըստ պատշաճի՝ չպի-
տի խօսիմ եւ ժամանակի սրնից արու-
թեան վրայ զոր ամեն ոք կը ճառէ .
չպիտի աշխատիմ պարտաւ տեղ Ձեր ըսե-
լու համար թէ Ժամանակը թանկագինն
անգին գանձ մի է . ժամանակի կորուստն
անդարմանելի է . ժամանակը պարտաւ
թեամբ և ծուրութեամբ անցունելը , չա-
րիքներ , մոլութիւններ ծնանիլ ըսել է
և այլն և այլն . այսպիսի խօսքեր ձեր ական-
ջին շատ հնչած և ինքնին քաղ համոզ-
ութեամբ փորձով , ուստի եւ վեր ի վե-
րոյ մի ակնարկ պիտի ձգեմ անցելոյն
և ներկային վրայ :

Նախորդ տարին Ձեր համար բարե-
գուշակ կը թուէր . Կարնոյ ձմեռն սառ-
նամանակ Ձեր սրտի և մտքի վրայ բրած
նմանօրինակ ազդեցութիւնն սակաւ իմն
անհետանալ սկսեալ , լուսոյ տաքութիւն-
նը ի հետեւ տարի սիրտը փորձ ինչ ջեր-
մոյց , և ճառագայթներն Ձեր աչքերը
բանալ կոխել , բայց թշնամոյն շունչը
տակաւին զորուոր էր , մարել ճգնեցաւ ,
լուսոյ շառաւիղներն արդիւն չանցաւ և
գրեթէ յաջողեցաւ . յառաջագիտութեան
շարժում , մրցում , խաւարի դէմ կեցած
տեղի ունեցան . մի յառաջդիմական յե-
ղափոխում ծնալ , բայց լոյս չարտադ-
րեցաւ . թշնամական ուղին արմատ ա-
ռաւ , մրցումի տեղ հարուած տրուե-
ցաւ , և ցաւ ի սիրտ կոծալում ասել թէ
փոխանակ մի քայլ առաջ երթալու , չը-
սեմ եւ դաջիլը՝ այլ նոյն տեղ մնացիլ
և մի աշուղի տարի՝ թերեւս ուրիշ մի
զոհեցիլ մութի ժամանակներուն : Այդ մար-
դիկ Ձեր չղզողութեամբ , փայտիցիւմ
ամեն ուրիշ փրօնին առնելով , ըրին ինչ
որ կուզէին : Դու դարձեալ ի թմրու-
թիւն անկար , մի խաւարի քաջամարտիկ
ծնունդ , թշնամոյց բանակին մէջ աւել-
նալով տեսար , բայց չղզացիլ թէ նա ձեռք
ստուաւ երդունը քեզ ի քուն ընկողմա-
նէ և իւր դերը կատարել . . . ահ ,
գէթ այս վերջինը ինչի :

Թոյսի մի իրաւացի և արդար խըն-
դիր յերեւան ելաւ . ոմանք զայրացան ,
ոմանք հայհոյեցին , ոմանք դիմադրեցին ,
հաւանականաբար այլց զրդմամբ . բայց
ի վերջոյ համոզուեցաւ , արդար լինելն
զղացիլ ու քաղիկ բանալով առէք ըսիր
վերջը , պտուղն , արդեւքը՝ է՛հ որ մի
սերմանածիկ հնձեր , տնկած ծառիկ
պտուղն ճաշակեր կամ տուածիկ ար-
դիւնք սպասեր եւ . խեղճ ժողովուրդ ,
այդ է ընթացքը , բնաւորութիւնդ , կամ
ըստ ոմանք տակաւագիլդ . . .

Նախորդ տարիներն այնչափ քարո-
զեցին , այնչափ զուխից ցաւցոյցին սո-
ւալով թէ՛ մարց դատարարութիւն
պէտք է , ազգայնից դպրոց մի ունենալ
անհրաժեշտ է , որ դու այդ ծայրերէն ա-
ղաւթեալ կամ ըստ Հայ սովորութեան օ-
տարին նմանեալ համար մի չէնք կառու-
ցիլ , ազգայնից դպրոց անուանեցիլ և հա-
րիւրաւոր մանկուհիներ հան լեցուցիլ ,
ինչպէս միւս դպրոցը . իսկ դատարարի
դատարան , կրթիչ , ուսուցիչ , է՛հ այդ
որստ հոգին կամ փառք Աստուծոյ , Բ.
Գ. Ղ. Կ. Կ. Կ. դատարաններով լեցուն
չեն միթէ դպրոցիկ . . . Ձեր հա-
մար արտաքին չնքին զեղեցիկութիւնն
ու պայծառութիւնը բաւական է , հերթ
է որ տար քաղաքացի մի անհայտ ու ը-
սէ , ապրիլի Կարնեցիք , որ այսպէս փա-
ռաւոր չէնքեր ունիլ . ինքզինքդ վար-
ձատրուած ու պարտք լիովին կատարած
կը համարես . իսկ բարոյական չնքը՝
ինչպէս կուզէ թող լինի . . . սորա հա-
կապատիկն ալ կը տեսնա՞ք սիրելի հայ-
րենակիցք . կը տեսնա՞ք այդ խեղճ մա-
նուկները՝ ձմեռ ատեն , սառած մի ձեռ-
քով աղքատիկ պատու մի հացը բռնած ,
մի ձեռքով դատարարը . շատեր բաց
զլուխով , բոսիկ ուղծով , պատառաւուն
քորձերով առաւօտուն խիտ կանուխ

կը փողեն դպրոց , և ինչո՞ւ . . . Իւրեանց
մտքին լոյս , հոգւոյն անուշ հայրսոյ
թեւութեամբ , ուղեղին մեղեկութեամբ ,
բարեբերին կրթեալ դատարարութեամբ ,
ազադային Մարդ անուանուելու հա-
մար , բայց աւա՞ղ , հոն միտքերնին կըսե-
նայ , ուղեղին կը փթանայ , բարեբերին
կապականիլ , կը հիւժին կը մաշին թէ բա-
րոյակցի և թէ ֆիզիկ ապէս , և սոցա պա-
տասխանատուն Աստուծոյ և ինչո՞ւ առ-
ջն զո՞ւ եւ , զո՞ւ . դե՞ռ որ նոցա ծնողն
կոչուած էք . . . Եկեղեցիներն երբ կե-
լա՞ն դիտէ անգամ մը առաջնորդ արանին
ընդարձակ և զեղեցիկ արահներուն տակ
քո գեղեցիկ չնքով բայց անբաւական
դպրոցիկ դէմ այն խցիկներն՝ ուր քո ման-
կիկներն մէկմէկու վրայ կուտակուած
են , մինչդեռ . . . լսէ կողաշէմ , սիրտը
չը՞ կսկծար , խիղճը չը՞ բորբոքի , քո ծը-
նողական գութը չը՞ շարժիր այդ աղիւ-
ղում տեսարաններուն առջն : Դպրոցն
երբ ներս կը մտնես , ակնարկդ դարձուր
միանգամ ժամանակացոյց տախտակին
վրայ , տես թէ ի՞նչ դիտելիքներ , ու-
սանելիքներ կառուցուին , հետամուտ ե-
ղիր դիտեալու թէ նա միմիայն ի՞նչ ցոյց
դրուած է անդ . քննէ՛ հասկցիր թէ այդ
դիտելիքներն կարո՞ղ են քո որդւոյդ ի-
րօք լոյս և քեզ յոյս տալ . . . ահ ինչ
չն էր , երբեք իմ Կարնեցիք , մինչև
երբ , սիրելի հայրենակիցք , խաւարը ձեր
միտքը պտտէ տղիտութեան շղթայն ըզ-
ձեզ կաշկանդէ , սե նախապաշարուններ
աւելորդապաշարութիւններ ձեր գաղափա-
րը խառնակեն . մինչև երբ կիբքն ու
ստեղծութիւնը , ետեւութիւնն ու չար նա-
խանքը ձեր մէջ տարակուսեն . ամեն ոք
իւր լեւ եմք առաջ քելու ձգնի . բաւ
համարէ , արթնցիր , հերթ է խորդալ ,
Նինուէ կործանելու մտ է , դու նորա
Յիւնանը պիտի լինի . մի ձգամք վերջին
բուռն զորութեամբ թմրութեցէ՛ք այդ ե-
ղիտութեան ժանդոտ շղթայն և պիտի
տեսնա՞ք որ օղակներն մի առ մի կը փը-
րին . մաքրէ , սրէ , փարատէ խաւարը
քո մտքն , որմէ մեծ ազդեր մաշուեցան
դու նոցա յետինը աւելի ենթակայ եւ
չուտ մաշուելու , եթէ չես մաշուած տա-
կաւին հայածէ՛ , ազ էտ մթութեամբ և մի-
ջին դարու մոլեռանդութեամբ պաշար-
եալ այն անձներն , որք հակառակ դարուս
պահանջած , լոյս , ճշմարտութիւն , գի-
տութիւն բառերուն իրականութիւն տա-
լու իրենանք ծանոթաւ բերանով խա-
ւար փտած գաղափարները կուզեն
ընդհանրացնել , այն գաղափարներն՝ որ
քո զգացմանդ վնասակար , յառաջագի-
տութեանդ խոչընդոտն և լուսաւոր ազ-
դաց ատէլի դարձած է :

Ինչնեւտաներորդ դարու գաւազնե-
րէն դատարարութեամբ են նոցա , վանէ՛
մի՛ թողուր մի՛ , քեզ կը վիրաւորեն կը
թունաւորեն կը մեղսուեն . դե՞ռ մի
տեսակ խեղդեալներն կը նմանին , որք
են ընդ իւր կընթանան , քեզ ևս իւր
եանց հետ կուզեն քաղել . գիթ մէջ թեւն
մէջ առանձնութիւնն իւրեանց ստիկում
կը պտտածուէ : Այս տողերը դրած մի-
ջոցիս չեմ գիտեր թէ ինչո՞ւ ակամայ կը
յիշեմ այն յիմար որքնոտած գաղափար-
ներով լի անձն , որ ինքզինք մի նոր լու-
սաւորէր : Սիրտ , Կիկերն , Սոցոմոն
կարճելով՝ անցեալ ատիկ հրապարակու-
քեզ կը քարոզէր . և եթէ դու լսածդ ու
նա իր խօսածն հասկնալու կարողութիւն
ուներայիք , պիտի համոզուէք թէ հայհո-
յութիւններ էին ճշմարտութեան դէմ ,
միտքութիւններ ուղիղ շաւղին . չէր ա-
մըշնար ըսելէ թէ աշխարհս միշտ ան-
շարժ է և արեւ կը դառնայ , Այս պա-
րադոմն ստուգիւ ոչ յիշելու տեղն և ոչ
ժամանակն էր . բայց ասով կուզեմ հաս-
կըցունել թէ տակաւին Ձեր մէջ քանի-
նէր կան որոց մտքի աշքերն ոչ , այդ-
պիսեաց խօսքերն ընկելու կարող չլինե-
լով իր պատգամ կընդունին , սրբոց կար-
գը կը դառնէ և նոցա արժանի յարգանքն
այսպիսեաց օղակ չերկնէր , որով տղի-
տութիւնը քաջալերած , լոյսը հալածած ,
ճշմարտութիւնն սքողած , մթութեամբ
պաշարուած և ի խորիւրտ գիմած կը
լինի :

Ահ սիրելի հայրենակիցք , ձեզ հետ
խօսողը քո որդւոյդ յառաջագիտութեան

անձկացող , նոցա զեղեցիկ մի ապագայ
փափաքող ու սպասող երիտասարդ մէ՛ .
գիտեմ ձայնս տկար է , մանաւանդ ձեր
խելեաց , գէթ մի խցէք ականջիդ և տե-
սութիւնիդ ընդդէմ ձեր բարձրակալ փա-
ռաւորութեանց , այո՛ , եթէ բոլոր ազգաց
քարոզութիւնն ու օրինակներն քեզ չհամո-
զեցին թէ քո յառաջագիտութիւնդ , քո
կրթութիւնդ , քո հանգստութիւնդ մե-
ծաւ մասամբ կանանց սեռին ազատ ու-
սունէն և դատարարութեանէն կախումն
ունի , դոնէ՛ քո ընտանեկան կենաց դառ-
նադառն փորձերէն համոզուէ՛ դորա
ճշմարտութեանն , բաւ համարէ , հանէ վան-
դակներու ետեւէն , վերցուր ծածկոցը դէմ
քէն , բռնակալութեան սանձը լեզուէն
այն սեռին , որմէ առաւել մեք կ'սպասեմք
յոյս ձգմարիտ կրօնի համոզումն թող լի-
նի նորա վանդակի որ անբռնարարելի է ,
Սրբոք դատարարակութիւնը նորա գէ՛մքին
քող որ անմեղանելի է , պիտանի ուս-
մամբ մեկէ նորա ըզեղն , անհրաժեշտ
գիտութեամբ դարգացուր նորա միտքն ,
և նա կարող է իտնալ թէ ո՞ր պէտք
է խօսիլդ ո՞ր լուր , ի՞նչպէս պատասխա-
նել կամ ինչպէս հարցունել . այո՛ , վերցուր
քո շինած ու բռնի ընդունել տուած վան-
դակն , ծածկոցն ու սանձն , որոցմէ ազա-
տելու և ուզածին ընելու առաւել դը-
ղու և երբեմն միջոց են՝ ցրէ՛ այն յոյս
նախապաշարութեամբ թէ ազգայնից ուս-
ման և գիտութեան սոսկման մի կայ , որմէ
անգին անցնիլ համաստեղութեան և պար-
կեպութեան դէմ է՛ չու չեմ կարող դը-
պել դպրոցիս այն կարգ մը երիտասար-
դաց գէ՛մ , որք ինքզինքնին ուստի կար-
գացեալ ձեւացներով հանդերձ մի և նոյն
գաղափարը կը տածեն ու կը տարածեն ,
կը ցաւիմ այդպիսեաց վրայ զի իւրեանց
թերի ու յոյս դատարարակութեամբն է
որ չեն կարող ըմբռնել թէ ճշմարիտ դա-
տարարակութիւնը՝ միշտ չարն իւր չարա-
գործութենէն , ո՞րքն որքն՝ ո՞րքն , մի-
տրեալ կինն իւր գէ՛ն ընթացքն կ'իստե-
ցնէ : Քարոզել թէ կին - մարդն այո՛-
մարդէն նուազ ուսանելու , նուազ հմուտ-
թիւն ունենալու է , ըսել է՛ զնա իւր
տխարակութեան մէջ պահելու նորա իրաւանց
վրայ բռնաճար , ազատ կամքին լիւր , և ը-
նել ո՛ր է ուզածն առանց հակառակորդ
մ'ունենալու . այո՛ - մարդ ուն այդ ըն-
թացքն սա կ'հետեւի թէ ինքը միշտ կու-
զէ մնալ իւր անսարկելի ու անհամեստ ա-
րարից մէջ և կ'ընթացի պահանջել զանոնց
որ ինքը չունի և չունեալ մինչև վերջը
Աստուծոյ և մարդկան առջն ուստեղէ
ետք , չուզիլ տալ կնոջ այն ազատ կը-
թութիւնն ու ուսմունքը՝ զոր ինք կըս-
տանայ , որպէս զի նա չկարողանայ բողո-
քելու , արդոք զայրոյթով աղաղակելու
թէ այդ մարդն ևս իւր ընթացքն ուղղէ .
նա իւր պարտականութիւնը կատարած
միջոցին կարող չլինի պահանջելու նախ
իւր իրաւունքներն . ահա այսպիսիք են
որ հանապաղ կարողանաին , չափ և սահ-
ման կորուսնայ ցգ . սեռին ուստի ու գի-
տութեան , համաստեղութիւն և պարկեշտու-
թիւն կը քարոզեն անոնք՝ որոց ընթացքը
Աստուծոյ իմ , միթէ կարելի է նկարագ-
րել . . . Եհ , ներքեցի սիրելի հայրենակիցք
ուսումնասիրական եռանդն ու աւելան
պիւ շատ հետեւ միջոցին , սիրտ լեցուած
էր , չկարողացայ դապել , թողուցի որ այս
մի քանի կաթիլը դուրս դեղանի . . . :
Սիրելի՛ հայրենակիցք , կուզէ՛ք որ քո որ-
դիկ ուսեալ առաքելի , զգաստ լինին ,
պատարաստ մայրեր , ճշմարիտ մայրեր ,
մի կին դատարարակելով մի անոնց ընտա-
նիք դատարարակել ըսել է՛ , այդ մայ-
րերն՝ այժմ դպրոցեք պիտի ձուլ-
ուին , ջանա՛ որ մաքուր ձեռքեր հը-
պին , հմուտ ուսեալ անձերէ առաջնորդ
ւնին , ուղղութիւնն ու ճշմարտութիւնը
նոցա սրտին մէջ արմատացնեն , նոցա
թող լինին քո բոլոր մտածութեանց ա-
ռարկայն , ձեր բոլոր հոգածութիւնը նո-
ցա դատարարակութիւնն , և բոլոր ճիշդ
և ջանքը նոցա անյողողող և անընդ-
հատ յառաջագիտութիւնը . այս է քո
կեանքն , ապագայն , յոյսն :

Սիրելի հայրենակիցք , 1875 թուական
նի առաջին օրը քեզ ողջունեցի անցելոյն
դառնադառն և ներկային տխուր յիշա-
տակներովն , ահ մե՞տ է արդեօք կամ

պիտի լինի՞ այն օրն որքն ամ քեզ ճշմա-
րիտ նոր տարի նոր օր և նոր կենսք ա-
ւետել ու մայրել :

Թ. Մ. Նշեալ

ԹԵՏՐՈՆ ՕՍԽԵՆԻԷ
ԿԵՏԻՔ ՓՆՇԱ

ՎԵՐԷՆԻԷ Թ. ԵՖԷՆԻԷ ՎԵՐԷՆԻԷ
1875 յուն 15 չորեքշաբթի գիշեր Ժամ 3

ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ ԵՐԵՎԱՆԻ

Ի ՆՊԱՍՏ

Պ. Թ. Նալեանի

ՍԷՆ ԹՈՐՈՒՂԻ ՏԻԿԻՆԸ

Թատրերգութիւն հինգ արար

ԷՖԷՆԻԷՆԻ ԻՆԹԻԳՄՍ

Կատակախաղ երկու արար Տաճկե-
րէն լեզուաւ .

Սովորական դին

ՆՈՒՆՈՒՑՈՒՄ

Մօսիւ վէնսան Ծաննիին կամըջի
գլխու թիւ 72 մեծ գեղարանը լա-
ւաջիկայ փետրվար 1 ին նոյն կամըջ
ջին գլուխը Բարձր. Մայր թագուհոյն
չինել տուած նոր վաճառատունը
պիտի փոխադրուի , ուր ասիէ առաջ
ալ քանի մը տարի Մօսիւ վ. Ծաննի
կեցած է : Իսկ այժմեան գեղարանին
տեղը վարձու պիտի տրուի փետրվար
վէն. Ռուզիկ Մօսիւ Ծաննիի հետ պէտք
է տեսակցի :

Ի Լ Ա Ն

Ասաքիի Ծահանէ Ծալիւր անպա-
րը իչին լուր մի օրու պիւնտքասա-
յէ գօնըն 10.000 քիլէ ետլաֆըն
պէհէր քիլէսի 17 շրուշա օլարաք
թալիպի Էօհտէսինտէ օլուպի քեանու-
նի սանիի բուսինին օն ալթընը բէնձ-
չէնպիհ կիւնիւ դարարը գաթիսի վէ-
րիլէճէ յինտէն , տահա աշաղը ֆիւսիթ-
լէ իթա իթմէյէ թալիպ օլանլարըն
եէվմի մէգքիւրաք Տարի Ծուրայի աս-
քէրիլէ կէլէլէրի :

1874 ֆեանուի Սանի 11
Պապը Սէրասքէրի

Իսկիւսարտէ քեպլին Բաշա լի-
մանընտա թէսլիմ օլուսնաք իւղը-
եէթմիլ պին քըյէտէն եիւզ պին քը-
յէյէ քատար միւսթէտէլ թահթա
քուրըն ֆիւսիթ օլուսնաք իւղընտան
պուսնուս աքճէսի բէչին օլմաք իւղ-
ըէ լիւրայի Սանի 128 շրուշէ օլարաք
պէհէր քըյէսի 3 շրուշ 14 փարայէ
թալիպի Էօհտէսինտէ քալըն օլուս-
ղուստան , պուսնըն չէհիլ ֆեանուի
սանիի բուսինին 22 ինձի չարանպա-
կիւնիւ դարարը գաթիսի վէրիլէճէ-
յինտէն , մէգքիւր քուրընտէն ֆիւսիթ
մէգքիւրաք տահա զիւստէ ֆիւսիթ
ալաղին թալիպ օլանլարին եէվմի մէգ-
քիւրէ դատար Պապը Սէրասքէրի
վաքը Էպիլիլէ ասքէրիլէ քոմիսիօնը-
նա միւրաճաթ իլլէմէլէրի :

13 Յունիս 1875
Պապը Սէրասքէրի

Թօփհանէի ամիլէ իչին Միւսիւ
ճէնիկիտէն ինիլթէրատէ Եօրքշաբ-
տէ Լօմօր ֆաղրիքաթընը պիւրիսի
տէրէճէտէ մալի օլմաք իւղըն քոնթ-
րալթ օլուսնաք , թէսլիմ իտէմէսի-
կի 7500 քանիթաք քէմիլըրի ֆեա-
նուի սանիի բուսինին 16 ինձի բէնձ-
չէնպիհ կիւնիւ մէվըրի միւնտքասայէ
քոնթրաճաղը ճիհէթլէ , թալիպ օլան-
լարին եէվմի մէգքիւրաք Տարի Ծու-
րայի ասքէրիլէ կէլէլէրի :

13 Յունիս 1872
Պապը Սէրասքէրի

